

ՄԱՍԻՍ

ՀԱՆԳԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԵԿՈՒԻ ՍՍԵՆ ՇՍԲՍԹ ՕՐ

ՏՆՕՐԷՆ - ԽՄՐԱԳՐԱՊԵՏ
ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պոլիս եւ Գաւառներ 40 Ղրուշ
Ռուսաստան 4 Բուպլի
Եւրոպա 10 Ֆրանք

ՀՍՍՑԷ

Ղալաթիա, Իզմիրի Օղլու խան, քիւ 3-4

ԱՌԱՋ ԹԷ ԵՏ

Առջի ժամանակներուն հետ բազմապատկառնալով ուսուցչական վիճակին բարելորդումը մասնաւորապէս կ'ընեն ուսմանը:

Նորէն ընդհանուր համալուծմին մէջ զարաւորութիւն մը պիտի ըլլայ իմա, երբ ընդհակառակը, ուսուցչական ապագայէն հետզհետէ անկեալ գտնեմ:

Չէ որ մեր ուսուցիչները արժանիքով լծեալ են ըլլան իրենց նախորդներէն, բայց ապահովապէս արժանապատուութեան տեսակէտով չափաւոր են այն պատուելիներէն զորոս հիմայ, երեսուն քառասուն տարի վերջը, ծիծաղելի կը գտնենք:

Իրենց ատենին, բարոյական մեծ ազդեցութիւն մը ունէին անոնք ազգին մէջ, իրենց ձայնին պատկառանքով կ'ունենդրուէր, իրենց կարծիքը միշտ աւելի կը կշռէր քան թէ ամիրային կամքը: Պատուելի. այս անունը ան-

գամ մեր նախկին ուսու իշներուն վայելած ընդհանուր համակրութեան ու մեծարանքին ապացոյցը չէ:

Հիմա բառին հետ որ հնութիւն կը հոտի՝ մէկդի ըրած ենք նաեւ այն հանգամանքը որ այդ բառը յիշեցնել կուտար մեզի. պատուելի. ինչ տխուր հեղինակութիւն մը պիտի ըլլար այժմայս բառը՝ յատկացուելով անոնց զորոս ամենէն քիչ կը պատուենք մեր հասարակութեան մէջ:

* * *

Պատճառը այն է որ ատենով մեր գործի մարդիկը նիւթական աւելի կամ նուազ յաջող դիրք մը ունենալուն համար ինքզինքնին աշխարհի իմաստնադոյն անձը ենթադրելու ունայնամտութիւնը չունէին: Հիմայ տարբեր է կանոնը. ընդունուած ճշմարտութիւն մըն է որ խելքին զօրութիւնը ու քանակութիւնը ուղիղ համեմատութեան մէջ է սնտուկի մէջի ոսկիներուն թիւին հետ. մարդս այնչափ աւելի խելացի է որքան դրամ ունի. կը կար-

ծէ՞ք որ անխելքութեամբ կամ դիպուածով կը շահուի դրամը . չտեսա՞ք հրապարակագիրները որ այս վարդապետութիւնը ջատագովեցին :

Գարավերջիկ ու սկեպտիկ այս գաղափարը կը բացատրէ մեր ուսուցիչներուն լքեալ ու անտեսեալ վիճակը :

Դասատու մը միշտ ուսեալ մարդ մը կը համարուէր բաղդատմամբ արհեստաւորի մը, սեղանաւորի մը, վաճառականի մը . իր խորհուրդներուն պէտքը կ'զգացունէր . իր գիտութիւնը՝ ոսկիներու փայլին առջեւ չէր նըսեմանար : Պատուելին՝ պատուի տեղը, իր մասնաւոր իրաւունքները ունէր ու յամառութեամբ կը պահպանէր զանոնք :

Եւ պէտք է ակոստալով խոտովանիլ որ մեր հրապարակագիրներս չպահեցինք զինքն այն պատուի տեղը որ մեր անուանութեանց մէջ յատկացուած էր իրենց : Ծաղրելով, պարտաւելով ու նախատելով, ստորնացուցինք զինքը ամենուն առջեւ և բերինք այն նիւն ու ոլորմուկ վիճակին՝ որ այնքան 'լը նմանի ծաղտեալ սպասաւորի մը զգոյշ կեցուածքին :

* * *

Քիչ մըն ալ իրենք գիրենք պզտիկ-յուցին . քիչեր կան որ իրենց պաշտօնին մեծութիւնը ու սրբութիւնը դիտնալով՝ անոր պատշաճ անհատական կեանք մը ունեցան : Գիտենք որ հրապարակագիրներ կան որ հանրային աշխատաւորի մը անհատական կեանքը չեն փնտռեր , չեն պրպտեր . անթափանց քօղով կը պահեն ներքին կեանքը ու չեն խառնուիր անոնց . մենք այդ կարծիքէն չենք ու չպիտի կրնանք ըլլալ . կեանքը բաժանումներ չունի . ներքին կեանք ու արտաքին կեանքը չի տարբերիր պատուաւոր մարդուն համար . չենք կրնար ընդունիլ որ ներ-

քին կեանքով անպատիւ մէկը՝ հանրային գործունէութեան մէջ պատուաւոր դառնայ . այս երկու երեսութիւնը չպիտի կրնանք ըմբռնել երբէք :

Ուրեմն մեր ուսուցիչները ստորնացուցին իրենց վիճակը . յետոյ , իրենց բարոյական նկարագիրը միշտ տեղի տուաւ դժուարութեանց առջեւ :

Հոգաբարձութիւններուն հնարած ամեն նախատինքներուն առջեւ իրենց արժանապատուութիւնը չպահեցին ու իրենց մէջ չունեցան այն արհեստական եղբայրակցութեան զգացումները որով ինքզինքնին պաշտպանէին թաղականներուն անիրաւութեանց դէմ :

Ընդհակառակը մրցակից եղան իրարու հացը յափշտակելու ու նուազուրդի դնելու ելան իրենց արդէն կարի չնչին ամսականները :

Եւ եկան հասան այն վիճակին ուր , երեսուն տարի վերջը , իրաւամբ պարտաւոր եղանք հարցնելու թէ առաջ թէ ետ գացինք :

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ

Ա. Զ. Դ. Ա. Ր. Ա. Ր. Ա. Դ. Ի. Ր.

Բ. Դ Ո Ւ Ռ.

ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՅ

Տպագրւած Տեւլաթիւն

Թ. 41

Մենք լրագիրը պատուէրներու հակառակ շարժած ըլլալով, եթէ իր այդ ընթացքը կրկնէ՝ պատժոյ պիտի ենթարկուի : Այս կը ծանուցուի իր արտօնաաւիրով :

3 սէֆէր 311

3 օգոստոս 309

(Կիւ : Տպագրւած Տեւլաթիւն)

ԱԿՆԱՐԿ ՄԸ

ԸՆԱԳԱՍՏԵՑ ԴՊՐՈՅԻՆ ՎՐԱՅ

Տասնութի մարի առաջ վահրամ կը գրէր Մաթի մէջ. «Էմիլ Զօլայի մատենագրութիւնը ժամանակի նշան մըն է. տըրամաբանական անխուսելի հետեւանքն է աշօրուան տիրող դաղափարաց որը, աւանդ մեր մէջ ալ սկսան հորդան տալ. Եւ մեզի մոռցնել տալ կ'ուզեն այն գրական ուղղութիւնը որ այսքան տարիէ ի վեր միտքերնիս էինք պահած»:

Այս տողերը գրուելէն ի վեր, հակառակ վահրամի հաւաքանքներուն, բնապաշտութիւնը գրեթէ սղօղեց մեր գրականութիւնը: Աճած է գնդակներու պէս գունազօյ, այլ մէջը պարտապ ճոռով գրութիւններ տեղի տուին աւելի իրական, աւելի լուրջ, աւելի սնուցիչ գրութիւններու: Հարկաւ մեր գրական արտագրութիւնները փորձեր են տակաւին, շատ անկատար, շատ պակասաւոր, բանն այն է աւելին որ ուղիղ ճամբուն մէջ մտած ենք և մեր նոր գրականութիւնը՝ իր այս սարմական վիճակին մէջ՝ դարձեալ շատ աւելի կ'արժէ քան հինը: Միօրինակ, արտամաբանական և յատակ աշխարհաբար մը յաջորդեց նաեւ բանաստեղծական և ճարտաստեղծական ունայն պերճութիւններով ուսուցիկ՝ քմահաճ և շատ անգամ ալ անխնայ լեզուի մը:

Բայց դեռ կան շատեր, նոյն իսկ գրողներուն մէջ, որոնք հաշտ աչքով չեն նայիր գրական այս նոր ուղղութեան, որոնք կանխապէս կարծիքներու կը ծառայեն՝ անբարոյական, լկտի, անխնայ հռչակելով այս նոր ուղղութիւնը և կարգացողը, որ ընդհանրապէս գրութեան արտաքին կերպարանք կը տեսնէ, առանց հօգին հասկն լաւ, իրաւունք կուտայ երբեմն այդ գայթակարճ բարոյականներուն:

Զարմանալի է որ մինչև հիմա դեռ յատուկ ուսումնասիրութիւն մը չէ տեսնուած մեր մէջ բնապաշտ գրողին վրայ, որով գուցէ միամիտ ընթերցողներու սը-

խալ կարծիքները քիչ չատ ճշգրտէին և անհեթեթի ու անհիմն յարձակումներու առաջքն առնուէր: Այս նկատումէն զերդուած՝ կը փափագիմ քանի յօդուածներով եթէ ոչ լիովի ուսումնասիրութիւն մը ընել, ինչ որ շատ բարձր է կարողութեան, գոնէ թարգմանաբար ամփոփ դաղափոր մը տալ, որչափ կարելի է, բնապաշտ գրողին վրայ, որուն այսօր կը հպատակին ոչ միայն վիպական՝ այլ նաեւ պատմական, քննադատական, թատերական և նոյն իսկ բանաստեղծական գրութիւնները: Ասոր համար կարծեմ բաւական է, եթէ Զօլայի մէկ քանի քննական գործերը մեզ առաջնորդ առնենք:

* * *

Անշուշտ, առանց ընդգիծութեան, կըրնանք ըսել թէ Էմիլ Զօլա բնապաշտ գրողին ամենէն հոյակապ հետեւողն եղած է, բայց իրմով չէ որ գրականութեան մէջ մտած է այդ ուղղութիւնը: Իրմէ շատ առաջ, հին յոյն հեղինակներէն մինչև Պոեայօ, ամեն քննադատ հռչակած էր արդէն թէ՝ գրութեան մը պէտք է ճշգրտութեան վրայ հիմնուած ըլլայ:

Զօլայէն առաջ Պալլար և Սթանտալ (շատ հեռուներէն չսկսելու համար) բնապաշտ հեղինակներ եղած են: Առանց էրեւակայութեան աղաւթներու՝ սկսած են մարդն ուսումնասիրել ու վերլուծել իր հոգեկան և մարմնական մասերով: Սթանտալ աւելի իբր հոգեբան՝ իսկ Պալլար ուսումնասիրելով մասնաւորապէս բարբերն ու միջավայրները: Ապա եկաւ Կիւսթավ Ֆլուպեր, որ իր հզօր գրչով գրեթէ վերջնական ձեւը տուաւ բնապաշտ վիպագրութեան: Պալլար իրաւամբ կը մեղադրուէր իբրեւ յոռի գրող մը, Ֆլուպեր կատարեալ արուեստագէտ մը եղաւ, իր հրուշակեղ տը՝ Մարմ Պալլա, որ այնչափ ազմուկ հանեց և նոյն իսկ գտտի պատճառ եղաւ բարոյականի դէմ գրութեան մը համարուելով, այսօր ֆրանսերէն ամենէն լաւ գրութեան գիրքերէն մին է: Ֆլուպեր այս գիրքով բնապաշտութեան կը բերէր այն վերջնական ոյժը, որ պակասած էր մինչև այն ատեն, այն է՝ ձեւի կատարելութիւն:

«Ֆիլոսոֆիկ հետ նոյն ժամանակ, կը գրէ էմիլ Զօլա(*), Էտմոն և Ժիւլ Կոնգուսեւս կ'աշխատէին այդ ձեւի պայծառութեան: Վիպակալի գպրոցէն չէին դար, ո'չ ալ դատականներէն. իրենց լեզուն կը հնարէին և անհաւատալի ուժգնութեամբ կը նշանակէին իրենց արուեստագէտի զգայութիւնները: Իրենք՝ առաջին անգամ, Ժեմայէի մէջ, ուսումնասիրեցին Բաբիգի ժողովուրդը, նկարելով արուարձաններն ու քաղքին շրջակայքի տեսարանները, ամէն բան բնութեւ համարձակելով նրբին լեզուով մը՝ որ մարդերուն և իրերուն իրենց բո'ւն կենդանութիւնը կուտար: Մեծ ազդեցութիւն մը ունեցան ներկայ բնապաշտ վիպասաններու խմբին վրայ: Եթէ մեր հաստատութիւնն ու ճիշդ մեթոդը Կիւսթավ Ֆլոպէրէն առինք, պէտք է ըսենք որ ամենքս ալ թունդ ելանք Կոնգուսեւսերու նոր լեզուէն, որ գաշներգի մը պէս կը յուզէր և մեր ժամանակի ջրղային սարսուռը կուտար առարկաներուն, զրուած պարբերութենէն աւելի հեռուն երթալով և բառերուն տալով նոր երանգ, նոր ձայն և նոր բոյր մը:»

* * *

Բնապաշտ վէպը լոկ քննութիւն մըն է բնութեան, մարդերու և իրերու վրայ: Իր նպատակը հանձարեղ առասպել մը հնարել և ապա այս ու այն կանոններուն համեմատ զայն ընդլայնել չէ: Երեւակայութիւնը ա'լ գործ չունի, կնճիռը կարեւորութիւնը կորսնցուցած է վիպագիրին համար, որ ո'չ առաջադրութեան, ո'չ հանգոյցին, ո'չ ալ լուծման համար կը մտածէ, իրականութեան վրայ ոչ բան մը կ'աւելցնէ ո'չ ալ կը պակսեցնէ: Բնութիւնը բաւ է և պէտք է ընդունիլ զանի ինչպէս որ է, առանց բարեփոխելու կամ յապաւելու, պէտք եղածին չափ գեղեցիկ ու մեծ է արդէն: Փոխանակ դիպուած մը երեւակայելու, զայն կնճառտելու և յան կարծազաս գէպքեր պատրաստելով հետեւութիւն մը առաջ բերելու, պարզապէս կ'առնեն մեր շուրջը մարդու մը

կամ ի ումը մը մարդերու կեանքը և կարձանագրեն հաւատարմօրէն: Գիրք կեանքի մը տեղեկագիրը կ'ըլլայ և ո'չ ուրիշ բան, իր արժանիքն է միայն ճշգրիտ գննութիւնը, վերլուծութեան մէջ կորովամտութիւն և գէպքերու տրամաբանական յաջորդութիւն: Նոյն խակ երբեմն ամբողջ կեանք մը չէ որ կը պատմէ՝ այլ մարդու կամ կնոջ մը կեանքին մէկ քանի տարիներուն պատմութիւնը:

Բնապաշտ վէպն իրեն համար սահման չունի, ամէն նիւթի կը խառնուի, պատմութեան, բնախօսութեան, հոգեբանութեան, ամէնէ բարձր բանաստեղծութեան կ'ելլէ, կ'ուսումնասիրէ ամէն տեսակ խնդիր, ընկերական տնտեսութիւն, կրօնք, բարք, վերջապէս բոլոր բնութիւնն իր ստացուածքն է, ազատօրէն կը շարժի հոն, ուզած ձեւերն առնելով:

Բնապաշտ վէպին մէկ ուրիշ նկարագիրն է անանձնաւորութիւն (impersonnalité). այսինքն վիպագիրը լոկ դիւանապետ մըն է որ կ'արձանագրէ առանց դատելու կամ հետեւութիւն մը հանելու. իր անձնական յուզումն ու մտածումները իրեն կը պահէ և տեսածը առաջ կը դնէ, զուք ո և է դաս քաղեցէք եթէ կ'ուզէք, հեղինակին ջանքը միայն ճշմարիտ գէպքեր ձեր աչքին տակ դնել է:

Այսպէս բնապաշտ վիպագիրն երբեք չերեւար իր գործին մէջ, Հեղինակին այս անանձնաւորութիւնը գլխաւոր կէտ մըն է, վասն զի բարոյականի խնդիրը կը յուզէ: Բնապաշտ գպրոցի հետեւողները կը մեղադրուին իբրեւ անբարոյական, որովհետեւ խաբեբան և պատուաւոր մարդը տեսարան կը հանեն առանց անոնց վրայ դատաստան կտրելու: «Բոլոր կռիւը հոս է, կը գրէ Զօլա, ներքին է խաբեբաններուն վրայ խօսիլ, միայն թէ պէտք է վերջը պատժենք զիրենք կամ գոնէ մեր բարկութեան և զղուանքին տակ ջախջախենք: Իսկ պատուաւոր մարդերուն կ'արժէ որ հոս ու հոն գովեստ և խրախոյս կարգանք: Մեր անայլայլութիւնն ու վերլուծողի հանդարտութիւնը՝ չարին և բարիին դիմաց՝ բոլորովին մեղապարտ կը համարուի և վերջապէս կը վճռեն թէ կը

(*) Le naturalisme au Théâtre

ստենք՝ երբ չատ կը մօտենանք ճշմարտութեան : Ինչ, միշտ անպիտաններ, գոնէ հատ մը շնորհքով մարդ չկայ : Հոս է որ համակրելի անձ»ի տեսութիւնը կ'երեւայ : Պէտք է որ համակրելի անձեր ըլլան, փնտա չունի եթէ ասով բնութեան պզտիկ հարուած մը տուած ըլլանք : Մեզմէ չեն ուզեր միայն որ առաքինութեան համար նախապատուութիւն ունենանք, այլ կը պահանջեն որ առաքինութիւնը գեղազարդենք և սիրելի ընծայենք : Անձի մը վրայ պէտք է բնորոշութիւն ընենք, անոր լաւ զգացումները առնենք և գէշերուն վրայէն լուսութեամբ անցնինք, նոյն իսկ աւելի գովելի կ'ըլլանք եթէ անձը բուրովին մենք հնարենք, բարեկրթութեան և պատուոյ կազապարին մէջ ձուլելով : Ասոր համար պտտաւոր սիպարներ կան որոնք դիւրաւ գործողութեան մը մէջ կը մտցնեն : Համակրելի անձեր են ասոնք, մարդու և կնոջ իտէական յղացումներ՝ որոնք սահմանուած են բնութենէն առնուած իրական անձերու գործած գէշ տպաւորութիւնը փոխարինելու : Ինչպէս կ'երեւայ, այս ամենուն մէջ, մեր միակ յանցանքն է բնութիւնը միայն ընդունիլ : Բացարձակ պատուաւորութիւնը գոյութիւն չունի, ինչպէս գոյութիւն չունի բացարձակ առողջութիւնը : Ինչ ինչ վէպերու մէջ տեսնուած այնքան սուրբ աղջիկներն ու այնքան ուղղամիտ երիտասարդները մեր երկրին կապուած չեն, զիրենք հոս կապելու համար ամէն բան ըսել պէտք է : Մենք ամէն բան կ'ըսենք, ա'լ ընտրութիւն չենք ըներ, ո'չ ալ իտէական մարդեր կը ստեղծենք և ահա՛ ինչու համար մեզ կ'ամբաստանեն իբր աղտեղութենէ ակտիւ զգացող : Վերջապէս բարոյականի խնդիրը սա երկու կարծիքներուն կը վերածուի . իտէականները կը պնդեն թէ սուտ խօսիլը հարկաւոր է բարոյական ըլլալու համար, բնապաշտները կը հաստատեն թէ ճշմարտութենէն դուրս բարոյական չկայ : Մենք գիտուններ ենք, վերլուծողներ, անգամագէտներ և մեր զիրքերը գիտական գործերու ստուգութիւնն ու տոկունութիւնն ունին : Ասկէ աւելի բարոյական, ասկէ աւելի խիստ դժուորոց չեմ ճանչնար : »

«Այսպէս է այսօր իրապաշտ վէպը և յաղթանակեց. բոլոր վիպագիրները իրեն կուգան, նոյն իսկ անոնք որոնք փորձեցին խորտակել զայն դեռ հաւկթէն չեւած : Յաւանական պատմութիւնն է այս. նախ կը բարկանան ու կը ծաղրեն. ապա՝ վերջապէս՝ իրենք ալ հետեւող կ'ըլլան. բաւ է որ յաջողութիւնը հոսանք մը սրտէ : Հիմա որ առաջին մղումը տրուած է, շարժումը երթալով պիտի աճի : Գրական նոր դարապուխ մըն է որ կը բացուի : »

ԵՐՈՒԱՆԴ՝ ՕՏԵԱՆ

ՈՍԿԵԶՈՑ ԳԻՐԲ

Ամենանոնք որոնք իրենց երակներուն տակ կը զգային գոնէ կաթիլ մը արիւն . . . հրապարակագրի, հաճոյքէ աւելի պարտք սեպեցին կարծիք մը յայտնել կամ սուսութիւն մը ընել կրթական խնդրոյն վրայ որ ամեն ատենէ աւելի կը գրաւէ հայ մամուլը, — եթէ ոչ անոր ուշադրութիւնը : Կանոնադիր, հրահանգներ, հրաւերներ, ծրագիրներ, շրջաբերականներ՝ մէկ կողմէն, լրագրաց յօդուածները, — բնականաբար թեր ու գէմ, — նխտերու համարատուութիւնները, քննութեան քննադատականները կամ գնահատումները՝ միւս կողմէն, այնպիսի լաբիրինթոս մը կը կազմեն, որ ուսուցիչներն ալ կը շուարին, աշակերտներն ալ և ամառը, արձակուրդի այս գեղեցիկ օրերը, կ'անցնին երկուքին համար անզգալապէս, տաղտկալի օրերու շարք մը դաւնալով . սրտի բաբախումներ, շլացումներու յաջորդող յուսախաբութիւններ, հմայքներ ու պատրանքներ կը յաջորդեն իրարու, և ոչ ոք կը մտաբերէ թէ պէտք է քիչ մը հանգիստ առնուն մեր կրթական աշխատւորները ու անոնց ձեռքին տակ զարգացող սերունդը : Շրջանաւարտներու քննիչ յանձնաժողով, ուսուցչաց վկայականի յանձնաժողով, և ասոնց մասնաճիւղերը հազիւ աւարտելու վրայ են իրենց աշխատութիւնը և ահա կը մօտենայ ուսուցիչ-

ներու ընդհանուր ժողովին գումարման հանդիսաւոր ժամը: Երկու օր եւս, և օգոստոս Ծին, երկուշաբթի պիտի գումարուի առաջին նիստը: Ասիկայ գոնէ պարտաւորի՞լ է, և անոնք միայն՝ որոնք արուեստին սիրովը վաւումած են՝ պիտի փութան երթալ ինքնաբերաբար իրենց մնացեալ շունչը հաւցնելու, այդ միջոցին անշուշտ հանդիստ պիտի թողունք դպրոցականները որք քիչ մը շատ տանջուեցան իրենց տասնօրեայ կամ քսանօրեայ քննութիւններէն, ո՞վ մեզմէ յուսահատ աչքով է: զիտած քննութեանց հրաւիրապահը, երկաթուղոյ ժամանակացոյցներու պէս ժամերու և վայրկեաններու ստորաբաժանումներով խճողուած, ուսմանց և լեզուաց երկար, անվերջանալի շարքով մը համեմուած: Ատեն մը, չեմ գիտեր ինչո՞ւ, այսօրան ազմուկ չկար դպրոցներու շուրջը, քննութիւնները կը կատարուէին անձայն անչուկ, մէկ կամ շատ շատ երկու օրուան մէջ, և սակայն այդ ժամանակի շրջանաւարտները՝ մեր այսօրուան ուսուցիչները, կը թափան պաշտօնեայները եղած են, առանց յիշելու անոնք որոնք, յետոյ, բարձրագոյն վարժարաններու մէջ մասնագիտութիւններու հետեւեցան: Հիմայ, ընդհակառակը, դիտողութիւններ կը տեղան ամեն կողմէ, դասատուներուն դէմ, շրջանաւարտներուն դէմ, այս մեծաթիւ արհուկին և այս լայնատարած հրատարակութիւններուն մէջէն բան մը որոշակի ճշգրիտ՝ սրատեսութեան խնդիր է, որ ամեն մարդու տրուած չէ:

Քանի որ մօտիկ անցեալի մը, հազիւ քառորդ դար առաջուան յիշատակութիւնը կ'ընեմ, աւերին է փոքրիկ խնդիր մը մէջտեղ նետելու, — «սակեղօծ գիրքերու» խնդիրը, հոգաբարձուները նեղանան թերեւս, բայց աշակերտները պիտի ուրախանան, և այս երկու զգացումներուն մէջ ընտրութիւն մը կատարելու համար՝ մտածելու պէտք չկայ: Այն ատենները, կըրթական գործին հսկող մարմինները՝ նընուազ խիստ էին քննութեանց մէջ, ալ աւելի առատաձեռն էին արժանաւորները վարձատրելու, — և նոյն իսկ սկաւրները խրախուսելու, — մասին: Բարեմիտ բան

մը կար քննիչին գէմքին վրայ, ու զուարթ չեշտ մը իր ձայնին մէջ, քննութիւնը ուսուցչին կողմէ միայն կատարուելու, գրաւոր հարցումներ կատարելու սեղմեալ դրութիւն չկար, քննիչը, ծրագրին վրայ գաղափար մը կազմելէ ետք, կը շատանար այս կամ այն ճիւղին վրայ քանի մը հարցում ուղղելով մէկ երկու աշակերտի, սովորաբար, հայերէնի քննութեանց մէջ, որ էն խիստ էր, երբ այցելուն կը տեսնէր աշակերտին քրտնաթոր վիճակը՝ դրաբութարգմանութեան մը կամ վերլուծման մը պահուն, մարդասիրական զգացում մը կ'ունենար, և ահա, զուարթ ձայնով մը, կ'ուղղէր «է հա՛ւա՛ւս ի՞նչ է» աւանդական դարձած հարցումը:

—Ձեր անունը՞, էֆէնտի...

—Կրկնելու պէտք կ'ա՞յ, «ի մանունա» ի՞նչ է:

—Բայց, ձեր անունը Համբարձում էֆէնտի է, — օրինակի համար, — կը պատասխանէր աշակերտը շիկնելով:

Եւ չորս կողմէ նշմարուած ծիծաղներէն միայն կը գուշակէր բառախաղը: Կը պատահէր շատ անգամ ալ որ քննիչները վէճի կը բռնուէին իրարու հետ, և աշակերտները կը պառնային հանդիսատես, այսպէս, օր մը, Թարգմանչաց վարժարանին մէջ, հայկաբան եկեղեցական մը ու բանաստեղծ հայկաբան մը, վէճի բռնուեցան՝ ճշգրիտ համար թէ ծանօթ քերթուածի մը «Արքայ», հայր, Ատրէսոսի քաջին ճետ» տողին վերջին բառերը բացայայտի՞չ են թէ ձայնարկութիւն. Ու աշակերտները, պահ մը քննիչի ու գնահատատողի դիրք առած, անհուն ուրախութեան մէջ էին: Հիմակուան ուսանողներուն տրուած չեն այսպիսի հաճոյքներ: Անոնք հետզհետէ կը զրկուին մանաւանդ, հաճոյքներու մեծագոյնէն, սակեղօծ գիրքերէ, որ կը տրուէին պարզեւաբաշխութեան հանդէսին: Տղու մը համար կ'ա՞յ աւելի մեծ հաճոյք մը, քան այդ գեղեցիկ ծրարն պատկերազարդ կարմիր ու կապոյտ գրքերու, սպիտակ ժապաւենով մը կապուած, որ կը նուիրուի իրեն, երբ կ'երեւայ բեմին վրայ, հանգէսէն ետքը, ինչպէ՞ս յաղթական ձեւով կ'անցնի իր թա-

ղին փողոցներէն, ծնողքին հետ, ու կ'երթայ գրասեղանին վրայ բանալ ծրարը. տղաքը ուսումնասիր ընելու համար աւելի ապահով և աւելի գեղեցիկ միջոց մը խորհուած չէ դեռ: Ասոր համար, հին դրութիւնը յարգի պէտք է մնայ միշտ:

Եւ ահա, երբ մէկ կողմէն ծրագիրները կը ծանրաբեռնուին ու քննութիւնները կը խտանան, վարձատրութեան այս եղանակը, փոխանակ աւելի չքեղացնելու, անհետ ընելու ջանքեր կը նշմարուին. անհամ, անխմատ սովորութիւն մը կը յաջորդէ ան ր, «նիւերու բաշխում»: Ուրովհետեւ... դպրոցներու ելմացոյցը նեղ վիճակի մէջ է եղեր: Օ՛հ, եթէ իրաւ հոգածու էք կրթական գործին և տղայոց մտաւոր զարգացման, պիտոճէի անտանելի խնդրով մի՛ պարարէք այդ մատաղ զըլուսներն ալ. միշտ ժամանակ պիտի ունենան հաշուադէտ ըլլալու. խնայութիւններ կրնան ըլլալ ուրիշ կողմերէ, լուսագոյն է դասատու մը պակաս ունենալ, բան մը պակաս սորվեցնել, և աշակերտին արդար իրաւունքը չի զլանալ. կարելի՞ բան է որ տղայ մը, որ ամբողջ տարին ոգի ի բռին աշխատած է յառաջագէժ հանգիստանալու համար, պարգեւաբաշխութեան օրը շատանայ թուղթի կտորով մը որուն վրայ չեւրմաչափի պէս աստիճաններ գրուած են:

Այսպէս անցան, այս տարի, մայրաքաղաքիս ազգ. վարժարաններու մեծագոյն մասին պարգեւաբաշխութիւնները. լրագրաց նկարագրութիւններուն մէջ այնքան ուշադրաւ չի դառնար այս կէտ, մտնաւանդ որ առիթ ալ կը հայթայթէ՝ դպրոցին նիւթական խեղճութիւնը պարզելու, բայց իրականի մէջ, խղճալի բան է:

Քիչ մը աւելի գիտակցութիւն ունենանք տղայոց, մանաւանդ փոքրիկներուն, հոգեկան հրճուանքներուն: Մանրաբեռնեցէք, որչափ կ'ուզէք, անոնց ուսմունքները, խտացուցէք անոնց քննութիւնները, ասոնք այնպիսի խնդիրներ են որոնց գիտողի աչքով միայն կրնան նայիլ կրթական մարմնոյն չգատկանողները, բայց երբ խնդիրը վարձատրութեան կուգայ, — Ոսկեղոծ զրբին, — ամենէն ան-

ձեռնհաս մարդն ալ կրնայ իր ծայնն ունենալ և ամենէն համեստ զրիչն ալ իր գիտողութիւնը: Եւ եթէ այսքանը չբաւեր, հարցուցէք տղաքներուն թէ բան մը հասկըցա՞ն, բան մը զգացի՞ն «նիւերու բաշխում» կոչուած նորելուկ հանդէսներէն, երբ պարապ կը մնային իրենց ձեռքեր: Այդ ձեռքերը, տարեմուտին, լաւ աշխատիլ կարենալու համար, կազդուութեամբ պէտք ունին, և աղուն համար, կազդուութեամբ, սակեղոծ զրբերու վարձատրութիւնն է:

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

Ս. ԷԶՍԻԱԾՆԻ

ԹԱՆԳԱՐԱՆԸ

Երջանկայիշառակ Գեորգ Գ. Կաթուղիկոսի օրով Ս. Էջմիածնի տաճարին կից արեւելեան մասում շինուել է, թէև ոչ աւանձին գեղարուեստական պատշաճութեամբ, Մայր Աթոռի յայտնի թանգարանը, որի մէջ ամփոփուած են մեր եկեղեցական հին անօթները, թաշերը, զգեստները, այլ և այլ հնութեան յիշատակաբաններ, կաթուղիկոսների անձնական իրեղեններէից մի մասը, հին դոյքեր, մի քանի նկարներ ևլն: Այդ բոլորը աննշան, չնչին կ'երեւայ մեր աչքին, եթէ մենք ի նկատի ունենանք մեր եկեղեցու փայլուն դարեւոր շրջանը, մեր եկեղեցիների անցեալ ճոխութիւնը, հարստութիւնը: Յաւալի է այդ, որովհետև յիշատակաբանների անհետանալով մենք ոչ միայն նիւթական կորուստ ենք ունեցել, այլ զըրկուել ենք այն գլխաւոր էական աղբիւրներից, որոնց գոյութեամբ մեր անցեալ կեանքը ուսումնասիրելիս մեծ դիւրութիւններ կ'ունենայինք: Սակայն եթէ լաւ մտածելու և միջոցներ ձեռք առնելու լինինք, շատ բան այդ անդառնալի համարուած կորուստից կարող ենք գարձեալ յետ ստանալ, որով թէ՛ մեզ և թէ՛ մեր ազգայ սերնդին մեծ ծառայութիւն մատուցած կը լինինք: Հարկաւոր է լուրջ

ուշադրութիւն դարձնել իւրեանց հնութեամբ սրբացած իրեղէններերի վրայ, երեւան եկած ժամանակ զգուշութեամբ և խնամքով ի մի հաւաքելով պահպանել և այդպիսով կարելի է գտնէ մի, թէև շատ չնչին, մասը գտնել:

Մենք չունինք մեզ յատուկ մի մեծ թանգարան, որտեղ ի մի հաւաքուէին այդտեսակ նշխարները. ոչ էլ առանձին առանձին քաղաքներում հիմնուած են այդպիսի կենդրոնատեղիներ, ուստի միակ յարմար տեղը առայժմ Ս. Էջմիածնի թանգարանը պիտի հաշուել: Հնութիւն ժողովելու նախաձեռնութիւնը բնականաբար պէտք է մեր զարգացած, նոցա մեծ արժէքը գնահատող հասարակութեանը պատկանի: Անհրաժեշտ էր անկասկած որպէս զի այդ ուղղութեամբ գործունէութեան ձգտումները առանց հետեւանքի և կըղզիացած չմնային, այդ գործով հետաքրքրուող և նրան ծանօթ անձինք մտածեն լուրջ կերպով այդ մասին, և իւրաքանչիւր ոք ի նկատի առնելով իւր գաւառի, քաղաքի կամ գիւղի հանգամանքները, ծրարադրեր առաջարկէր, ընդհանուր համաձայնութեամբ մշակուէր որոշուէր թէ՛ հաւաքելի իրերի տեսակները, թէ՛ հաւաքելու միջոցները և եղանակը և վերջապէս թէ տեղը: Այս անգամ խնդիրը արծարծելու շարժառիթը հետեւեալն է. Ս. Էջմիածնի միաբանները գտնուում են այլ և այլ պաշտօններով երկրի ամեն մասերում, կամ իւրեւ վանահայրեր, կամ յաջորդներ, կամ թեմակալներ: Նոցա մէջ կայ, ինչքան նկատել եմ, առանձին սէր հնութիւններ ժողովելու, և նոքա էլ իսկապէս ամենից մեծ գիւրութիւն ունեն այդ անելու: Բայց ի՞նչ են դառնում նոցա ժողովածուները. պատասխանը շատ պարզ է. որովհետեւ դոքա կամ չեն ցանկանում կամ առանձին ուշադրութիւն չեն դարձնում կենդանութեան ժամանակ իւրանց ունեցածը ըստ պատկանելոյն Ս. Էջմիածնի թանգարանին ուղարկելու, ուստի հազիւ է պատահում, որ նոցա մահից յետ մի բան տեղ հասնէր. ի հարկէ եղել են չնչին բացառութիւններ:

Ահա այդպիսի մի բացառութիւն է

ներկայանում մեզ այսօր Հին Նախիջեւանի յաջորդ Գրիգորիս վարդապետը, որը ոչ միայն սիրահար և ժողովող է հնութեանց, այլ հասկացել է նաև, որ միանգամայն աննպատակ կլինեն իւր աշխատանքները, եթէ նա ժողովածոքը մօտը պահելով թոյլ տայ, որ իւր մահից յետոյ կորչէին, ինչպէս սովորաբար պատահում է մեր հոգեւորականների ստացուածքի հետ: Օրինակներ հազարաւորներ են, բաւականանալով միայն ամենավերջինը յիշելով: Ատրպատականի առաջնորդ Ստեփան եպիսկոպոս Մխիթարեանը վախճանում է. մեր լրագրերը հաղորդում են, թէ նա թողել է շատ գրքեր և ձեռագրեր, Ս. Էջմիածնում ստացուում են մի փոքրիկ արկղ գրքեր, բայց այդ գրքերի մէջ ոչ մի պահելու արժանի գիրք չկայ, իսկ ձեռագրերի պաշարն էլ կազմում են Աբել եպիսկոպոսի մի քանի քարուղ-գրքերը: Ո՞ւր մնացին նրա անձնական գրութիւնները, նորա գրադարանի գրքերը:

Գրիգորիս Հայր սուրբը կարճ ժամանակ մնալով Հին-Նախիջեւանի վիճակում նկատել է, որ այդ գաւառը շատ հարուստ է հնութիւններով և սկսել է հաւաքել և հաւաքածը բերաւ այստեղ յանձնեց Ս. Էջմիածնի թանգարանին: Այդ փոքրիկ, բայց ընտիր ժողովածուն ունի մի քանի այնպիսի հազուադիւր կտորներ, որ իւրաքանչիւր թանգարանի զարդ կը կազմեն: Իրեղէնների մէջ կան նախապատմական հնութիւններ, որոնք հետաքրքիր են: Սոցա մէջ յիշենք մի քանիսը. Նախիջեւանի գաւառը մինչև օրս էլ յայտնի է իւր բազմաթիւ օձերով և ժողովածուի մէջ էլ կան 11 հատ քարացած օձեր, որոնցից 10 փոքր են և պահուած է միայն պոչի մասը՝ դաւարուած դրութեամբ, այնպէս որ խոունջների մեծ նմանութիւն ունին, մէկը 17 սանտիմ. լայնութիւն ունեցող օձի մէջքի մասն է՝ 19 սանտիմ. երկարութեամբ. սոքա գտնուել են՝ կարմիր վանքի լեռներում: Ապա՝ առանձին ուշադրութեան արժանի է մի գնդաձեւ քարացած ցամաքային մեծ խոունջ, որին Գրիգորիս Հայր սուրբը նաև տեղ է ընդունում, որովհետեւ այդ մարմնի միջում

կան փոքրիկ նաան հատիկների կերպարանք ունեցող մարմնիկներ, բայց նրա արտաքին ձևը և ոչ մի նմանություն չունի նաան հետ, սա եւս գտնուել է կարմիր վանքի լեռներում:

Քարացման ղարմանալի օրինակներ են ներկայացնում Նախիջևանի աղահանքում գտնուած ձկները, որոնք մեծ քանակութեամբ պահուել են կաւային շերտի մէջ սղմուելով, այդ շերտերի վրայ թողել են իւրեանց արտատալութիւնը, առանց չողափելի մարմին թողնելու: Այդ շերտերը $\frac{1}{2}$ սանտ. հաստութիւն ունին և եթէ քերում ենք մի ձկան պատկերը, տակից երեւան է գալիս մի ուրիշինը: Քարացած իրերի մէջ յիշելու արժանի են նաեւ Դարապետազ գիւղի մօտ գտնուած փոքրիկ, կոլոր քարերը, որոնք կարող են քարացած պտուղներ լինել, ապա մի քանի բլղէններ, մի գորտ, մի կիսադունդի ձեւով կրիայի նմանութեամբ կենդանի, քարացած բոյս ևւն:

Իսկ հին իրերի ժողովածուի մէջ առաջին տեղը բռնում են Հայր սուրբի ունեցած հռովմէական և պարսկական հին դրամները. Յ հատ ոսկի, 77 արծաթ, 114 պղինձ և մի քանի հատ բրոնզեայ դրամներ: Այս առթիւ մի կէտ հարկաւոր եմ համարում անուշադիր չթողնել, այդ այն է, մինչեւ օրս ես աւիթ եմ ունեցել տեսնել մի քանի թէեւ աննշան դրամական ժողովածուներ և իսկոյն նկատել եմ, որ շատութեամբ առաջին տեղը բռնում են պարսկական դրամները և ապա շատ են գտնուում նաեւ Հռովմէական դրամներ: Ներանցից շատերը մինչեւ օրս էլ գործ են դրւում իբրեւ կանանց զարդարանքներ և դրամ ժողովուրդները լաւ կանեն այդ բանի վրայ ուշադրութիւն դարձնեն:

Յունական հնութեանց յիշատակարանների մէջ, կարելի է տեսն բացարձակագէտ, առաջին տեղը իւրեանց շատութեամբ բռնում են խեցի անօթները, որոնք ծառայելով ոչ միայն իբրեւ առօրեայ գործածութեան անօթներ, այլ նաեւ իբրեւ կրօնական սպասներ, գտնուել են և դեռ գտնուում են մեծ քանակութեամբ հին տաճարների աւերակների կոյտերի

մէջ և մանաւանդ գերեզմանատներում: Այժմ հազիւ թէ եւրոպայում մի թանգարան գտնուէր, ուր այդ անօթներից տասնեակ օրինակներ չգտնուին, իսկ՝ մեծ, յայտնի թանգարաններում նոյա թիւը հազարների է հասնում: Նոյա արժէքը շատ մեծ է, ոչ միայն արուեստական և գեղարուեստական տեսակէտից, այլ նոքա մի տեսակ անգնահատելի աղբիւրներ են Յունաց զրցաբանութեան, գրականութեան պատմութեան, նոյա առօրեայ կեանքի ուսումնասիրութեան և ուրիշ շատ խնդիրներում, որովհետեւ այդ անօթները զարգարուած են բազմաթիւ նկարներով, որոնց նիւթը յիշեալ մասնաձևերից է առնուած: Խեցի անօթների ուսումնասիրութիւնը յունաց գեղարուեստով պարագոյնների համար առանձին նշանակութիւն և հետաքրքրութիւն ունի, նաեւ հին ազգերի փոխադարձ վաճառականական ևւն, հազարակցութեան վերաբերմամբ, ազգերի քաղաքակրթութեան աստիճանը չափելու, իրարից քաղաքականացէտ, տնտեսացէտ և բարոյացէտ ազգման հարցերը որոշելու ժամանակ: Յունաց խեցի անօթների գիւտի գլխաւոր տեղերն են, ամենից առաջ Յունաստանն ու Իտալիան, ապա Միջերկրական և Սև ծովերի սփերը, մասամբ նաեւ փոքր Ասիան: Հետաքրքրական էր իմանալ՝ արդեօք հայաբնակ հին գաւառներում էլ գործածական չեն եղել այդ տեսակ անօթները, վաճառականների կամ մեծամեծների ձեռքով արդեօք այդ վալլուն գեղարուեստական զարգարանքները ներս չեն բերուել: Մինչև օրս դեռ՝ բախտ չեմ ունեցել տեսնելու հայաբնակ գաւառներում գտնուած յունական խեցեղէններ, բայց Գրիգորիս վարդապետի ժողովածուի մէջ կան 5 խեցի անօթներ, որոնցից մեկի վրայ նկատում եմ արտաքին՝ յունական երեւոյթ: Նոքա բոլորն էլ շինուած են այն տեսակ կաւից, որի գլխաւոր հանքատեղին Նախիջևանի գաւառն է՝ այն է անօթները կրակում այրուելուց յետոյ, մի տեսակ սպիտակ գոյն են բտանում, աւագային շատ մասեր ունենալով ծակեր շատ ունին, միջի հեղուկը

գուրս են ծորում և այդ է պատճառը, որ նոցա միջի ջուրը միշտ զով է մնում, որովհետեւ գոլորշիացումը անօթի արտաքին մասից չափ է, ուստի նոքա տեղական արդիւնք են և ոչ ներմուծած: Ներանցից երկուսը պարունակութեամբ թէյի և զինու բաժակի մեծութեամբ՝ սովորական կուլաների ձեւ ունին և կարող են ծառայած լինել իբրեւ անուշահոտ իւղերի սրուակներ, միւս երեքի թէյ ձեւն է անսովոր և թէյ դժուար է նոյն իսկ բացատրել, թէ նոքա ինչ նպատակի են ծառայել: Մէկի ձեւը կոկոսի ընկուզի կեղեւի նմանութիւն ունի, կամ կրիայի մէջքի, արտաքուստ ոչ մի զարգարանք չունի, մինչեւ անգամ բռնելու տեղ էլ չունի, որ կարելի լինէր ընդունել իբրեւ աւօրեայ գործածութեան անօթ, այնպէս որ ակամայից պէտք է ենթադրել, որ նա ծառայել է իբրեւ կրօնական ծիսակատարութեան համար որոշած մի անօթ: Նոյն այդ նպատակի համար ծառայած պիտի ընդունել նաեւ միւս երկու անօթները, որոնք երկուսն էլ մի ձեւ ունին տարբեր մեծութեամբ: Նոցա ձեւը շատ նման է մեր սովորական թէյամաններին, բերանը նեղ մէջքը լայն գուրս ինկած, ստորին մասը դարձեալ նեղ, մէջքի վրայ շինած է մի խողովակ միջի հեղուկը թափելու նըպատակաւ, իսկ զրա հակառակ կողմում կայ մի փոքրիկ բարձրութիւն, որ հաղիւ կարելի լինի երկու մասերի ծայրով բռնել, հետեւապէս չի ծառայել իբրեւ ունելիք. զրա մէջ կայ նաեւ մի ծակ, բայց այնքան փոքր է, որ չի կարելի ընդունել, որ նրանով պարան են անցրել անօթը քաշ անելու ժամանակ: Նրանով ջուր խմել, կամ նոյն իսկ ջուր ածել նրանից ոչ մի յարմարութիւն չկայ. առայժմ միակ բացատրութիւնն է. նա եղել է ճրագ հին գերեզմանատներում, որովհետեւ այնտեղ է գտնուել, թէեւ այդ ենթադրութիւնը հակառակ է նրանց չափազանց մեծութեան. մէկը պարունակում է չորս շիշ ջուր: Սորա արտաքին մասը, անօթի ուսերը, ի՞նչ կարելի է այսպէս ասել, զարգարուած է քառակուսի նշաններով, իսկ միւսի ամբողջ արտաքին մասը ծածկուած

է այն կարմիր ներկով, որին Firnis—ջրազեղ են կոչում, և որով ներկուած են հին յունական անօթները, հէնց այդ է պատճառը, որ ընդունեցինք արտաքին ազդեցութեան թեթեւ հետքերը:

Հայր Գրիգորիսի բերած միւս առարկաները թէեւ համեմատած յիշեալների հետ՝ այնքան էլ հին չեն, բայց ամբողջութեամբ հետ մեզ համար շատ թանգ են: Մանաւանդ ուշադրութեան արժանի են սեւ թերթակալից (Schieferstein) շինած, վարդի թփերով և ուրիշ զարգարաններով պաշտօնած մի թէյաման և մի կաթնաման, որ գտնուել են Հին Նախիջևանի աւերակներում, բայց երկուսի ձեւը այնքան նոր է, որ դժուար է նրանց մեծ հնութեանը հաւատալ: Դժբաղտաբար մեր օրերում հնութիւններ կեղծողներ շատ կան, որովհետեւ շատ տեղւոյն իսկ տգէտ ժողովուրդը հասկացել է, որ հնութիւնները մեծ արժէք ունին գիտնականների աչքում, ուստի նմանութիւններ շինելով թաղում են հողի մէջ և ուրիշի ներկայութեամբ բանդում են արդէն նախապէս քաջ յայտնի տեղը և իբր թէ միանգամայն անսպասելի գտնում են, ինչ որ իրանք են ծածկել: Առարկաների մէջ կան նաեւ ժանգով կիսով չափ ոչնչացած մի քանի սլաքներ, մի պղնձեայ բուն, մի կոթը ծալուող թաւայ, մի զանգակ ևն. ևն:

Ընթերցողը տեսնում է, որ Հ. Գրիգորիսի շնորհիւ մեր թանգարանը կը հարստանայ մի քանի հարկւր կոտոր իրերով, որոնց մեծ նշանակութիւնը կ'իմանան ըստ արժանւոյն դնահատել հնագէտները: Նա խոստացել է անընդհատ շարունակել իւր ժողովածոյքը և յոյս ունի, որ կարող է ժամանակին մեր թանգարանում առանձին մաս դրաւել, ի սրտէ նրան եւս նոյն և յարատեւութիւն բարեմազկեւով, յոյս ունինք, որ գովելի գործին կը գտնուին հետեւողներ:

Էջմիածին

Ֆ.

Ա Ն Ն Ա

[ՆՈՐԱՎԱԿԱՅԻՆ]

(Շար. Զախարյա Ռեւէն և Ֆերշ)

Երբոր տուն վերադարձաւ Արամ, մի առ մի մտքը բերաւ ինչ որ անցած էր նոյն երեկոյթին:

Եւ Աննային յեղաշրջման պատճառը առանց վնասուելու, տարրալուծեց անոր նայուածքները. անոնց մէջ սիրոյ հեղուկը գտաւ, երկտարական հեղուկէն աւելի զօրեղ՝ սիրոյ հեղուկը, որ կը լուայ ակնարկները խոնաւ բոցի մը մէջ:

Ու, օրրոցաթուին մէջ երկրուն, կը գիտէր ծխախոտին մաւխին ուրումները, որոնց նման կը գալարուէին, կ'անօտրանային տակաւ, ու վերը, իր գլխուն վերեւ, օդին մէջը, կը տարալուծէին իր զգացումները, տարած, իրարու հետ շփուած և սուրացող թախչիւր առած:

Արամ, այս քայքայուած վիճակին մէջ, գիտակից իր երջանկութեանը, ու ձգելով որ իր խոհերը վազեն անոր հետեւէն, աղջու մը թափիկներուն պէս որ կը վազեն թիթեռնիկին հետեւէն, քանի մը ժամ անցուց իր ննջասենեակին մէջ, առանց քնանալու:

* * *

Ան գիշերէն վերջը, երբ չորս անգամ իրար տեսան, Աննա և Արամ:

Համակրանքի փոխադարձ ցոյցերուն վրայ երբ ալ սէրը իրենց սրտերուն մէջ մտած էր, գաղտնի ու լռին, Արամ առիթը գտաւ իր սիրտը բանալու անոր:

Պարտէզն էին, իրիկուն մը: Աննա, Արամ ին լամպակին վրայ դնելու համար ծաղիկ քաղելու գաղափարով, մտիկ կ'ընէր անոր սիրատարի խօսքերուն. երբ անիկա խօսեւէն դադրեցաւ, Աննա փունջը անոր յանձնեց, ու երկշտ ձայնով մը որ երգի մը պէս անուշ կը հծծէր այդ թուփերուն ու ծաղիկներուն քով ըսաւ անոր, իր ամենէն անուշ նայուածքը նուիրելով.
— Ես ալ քեզի կը սիրեմ...:

Ու, երեւակայական քայլերու շնորհիւ մը վախցած, մանաւանդ այս խոստովանութենէն վրդովուած, վազեց հեռացաւ քովէն, հուրի մը պէս որ մագական բառ մը կ'ըսէ ու կ'անհետի, իր հետքերուն վրայ ձգելով հիացումը՝ շացումին դէմը, և պատրանքը՝ աներեւոյթացումին դէմը:

* * *

Երջանիկ էին, երկուքն ալ թէ՛ Արամը և թէ՛ Աննան. որովհետեւ իրար կը սիրէին երկուքն ալ, մանաւանդ որ իրար կը համոզային:

Շաբաթը անգամ մը գրեթէ Արամ իրենց կուգար, կամ իրիկունս դէմ՝ դիւանատունէն վերադարձին, և կամ ընթերիքէն վերջը:

Մէկտեղ յաճախ կը վիճաբանէին զանազան խնդիրներու վրայ. վիճաբանութիւնները երբեք այնքան լաւ ելք մը չէն ունենար որքան երկու տարածութեան մէջ. անոնցմէ մէկը չուտ մը տեղի կուտայ միւսին, մանաւանդ էն շատ սիրողը, կը համոզուի, և իր հիացումը կ'աւելնայ խորհելով անոր վիճելու և տրամաբանելու չիրքին վրայ:

Երբեմն ալ ընթերցումներ կ'ընէին իրարու, կամ թէ վէպի մը նիւթը կը պատմէին հանդարտօրէն. ու երբ առանձին մնային, իրենց սէրը կը բացաւրէին, իրարու հաղորդելով էն պզտիկ յոյզերը ու իրենց կենցաղին էն մանր պարագաները:

Ընդհանրապէս պարտէզը կը նստէին, սաղարթներով ու վարդերով պսակուած վրանի մը տակ. ու ամենքը մէկ, անհոգ ու գոհունակ, կը խօսակցէին:

Աննայի փափաքը ասիկ անդին չէր անցներ. մատերն ըլլալ Արամին, անոր ներկայութիւնը վայելել, խօսիլ հետը, ի տարակուսուիլ իր սիրոյն վրայ, առ էր ուղածը. ուստի երջանիկ էր:

* * *

Աննա մեծ հաւատք ունէր Արամին վրայ. գիտէր որ անիկա կը հաւտայ անձնուէր ու մաքուր սիրոյ մը կարելիութեանը. և իր ու անոր զգալու եղանակին մէջ քանի տարբերութիւն չէր գտներ,

այնքան կ'արժարժէր իր սէրը, այնքան պաշտելի կը գտնէր Արամը:

Իրաւ ալ այդ մեծ հաւատքին արժանի էր Արամ, և զայն իր սիրուհին ճշգիւ կ'ըմբռնէր, կը դատէր:

Իր թաղին Ա... վարժարանին աշակերտած, յետոյ դիւանատան մը մէջ պաշտօնի անցած էր. հոն ճանչցած էր Աննային եղբայրը, որուն հետ շուտով մտերմացեր էր:

Թէեւ առած ուսումը մեծ բան մը չէր, բայց շատ արթուն և սրամիտ էր:

Իր ծնողքը միջին դասակարգէն ըլլալով՝ փայլուն բաներ չէր տեսած Արամ. դպրոցէն ելած տարին, զրացուհիի մը հետ կարճատեւ յարաբերութիւն մը ունեցած էր պատուհանէ պատուհան, որ ընդհատուած էր անոր ընտանիքին դիւրափոխութեանը պատճառով: Իր սրտի պատմութիւնը գրեթէ աս էր. անկէ անդին շատ տարտամօրէն կը ճանչնար կիւնը ընկերութեան մէջ:

Աննայի ընտանիքը նոր հաստատուած էր իր ծննդավայրէ ելող այդ գիւղը. երբ Արամ անոնց տունը յաճախել սկսաւ իր բարեկամին հրաւերովը, չլացաւ անոնց բարեկեցիկ ճոխութենէն, և, առջի վայրկեանէն, համակրեցաւ Աննային. բայց տեսնելով որ անիկա պաղ է ու միշտ տխրադէմ, ալ չը յուսաց՝ զայն մտքովը «անպիտան» կոչելով:

* * *

Հազիւ երեք չորս ամիս անցած էր, և Արամ առջի նման երջանիկ չէր երեւար. իր բարձր ճակտին վրայ մոածում մը իր սեւ շուքը կը ձգէր, ինչպէս բուրձակը իր շուքը կը ձգէ տանիքին վրայ՝ ուր կը պատրաստուի հեծեծելու:

Ի՞նչ էր այդ մոածումը. թէ՛ Աննա իրմէն ձանձրացած ըլլալու է, թէ կը խաբէ զինքը, թէ...:

Եւ երկու գլխաւոր կէտերու վրայ կուգար զետեղել իր կասկածը:

Նախ, քանի մը անգամ օրագրի ձեւով նամակներ յանձնած էր Աննային. մինչդեռ Աննա, հակառակ իր ամէն աղերսին, կը զղանար, անպիտանի կերպով կը մեր-

ժէր տող մը խակ գրելու իրեն:

Եւ ինչո՞ւ:

—Մի՛ յամառ ըլլար, Արամ, կը պատասխանէր Աննա. կ'ուզե՞ս որ հարուած մը զայ՝ սպաննել մեր սէրը. ա՛խ, ես չեմ ուզեր ադ բանը. տե՛ս որ քեզ ըսեմ, ու դուն ալ պիտի համոզուիս, կը վախճամ որ ծնողքս կամ եղբայրս ձեռք կ'անցընեն մեր գիրը. այն ատե՞ն. այն ատեն ալ դուն մեր տունը գալու չես. այն ատեն ես պիտի մեռնիմ, կ'ուզե՞ս որ ասանկ ըլլայ. մինչդեռ, երբ զոյշ ըլլանք, մեր սէրը պիտի երկար տեւէ, օ՛հ, երկար ատեն պիտի կրնանք իրար սիրել, երկար ատեն, մինչեւ որ հատնինք, մինչեւ որ մեռնինք:

Արամ, այսքան խանդավառ խօսքերէ վերջ, պահ մը կը համոզուէր:

Օր մըն ալ, երբ «բանաստեղծական վրանին» տակը—ինչպէս կ'ըսէին—առանձին մնացեր էին, Արամի շուրթերը՝ զոր բաղձանք մը կ'այրէր՝ անոր այտերուն մօտեցան. բայց Աննա, դուրդուրանքի ժրպտումով մը, մատները պատնէշ ըրաւ այդ շրթներուն՝ որոնք գոհացան պատնէշին հպելով:

Երբ միեւնոյն արգելքը մէկ երկու անգամ եւս տեղի ունեցաւ, Արամ շատ տրտուր մնաց. չէր կրնար ըմբռնել այս բանը. ու, լուռ ու մունջ, կը սկսէր թաղուիլ խոկումի մը մէջ, մինչեւ որ, Աննա կը տեսնէր որ անոր աչքերուն մէջ արցունք կուգայ, և՛ իրենց միմեկ մնացած ատենը՝ սա կերպ բացատրութիւն մը կուտար.

—Համբոյր մը շատ անուշ բան մը կուգայ քեզի, բայց կրնա՞ս ըսել որ համբոյրի մը համար պիտի զոհէիր սէրը. համբոյրը, ինծի համար, բանալին է խել մը ըզձանքներու զոր չեմ սիրեր. և գիտեմ որ երբ կին մը այդ բանալին կը յանձնէ իր սիրածին, խոտուում մըն է ատիկա աւելի փայլուն վաւերամբերու. այդ խօլ իղձը վանէ մտքէդ. ի՞նչ կը պակսի մեզ. դուն զիս կը սիրես, ես ալ զքեզ կը սիրեմ, ու մեր հոգիները իրարու հետ շփոթուած են. սէրը միշտ, բայց միշտ ինծի պէս ճանչցիր, ու զայն բարձր, զայն անաղարտ

պահենք, բարեկամներ մնանք միշտ, առանց ձգելու ինքզինքնիս այն հոսանքին մէջ ուր մարդ կը մոռնայ սէրը, որուն մէջ մարդ ապահով օր մը կը գտնէ զըզուանքը...

* * *

Երբ տուն կուգար Արամ, կը զոջար որ կակղած էր Աննային խօսքերէն:

Ձէր կրնար հասկնալ. չէ, չէր կրնար հասկնալ. բայց չհասկնալու չափ անխելք չէր գտնէր ինքզինքը:

Ինչ որ ծաղրելի կը գտնէր սիրոյ մէջ, ան հաշիւն էր:

Կին մը որ, կ'ըսէր իւրովի իր սենեակին երկայնքը պտտելով, կը հաշուէ, կին մը որ կը խորհի՝ հաշուագէտի մը պէս ճշգրէ՝ ինչ որ կը զգայ, այն կինը ճշմարիտ սիրող մը չկրնար ըլլալ:

Այս բանը կը յուսահատեցնէր զինքը. ու դառնութենէն կուլար իսկ:

Կասկածոտ բնավորութիւն ունեցողները դժուար կրնան հաւատարակիւ պահել իրենց երջանկութիւնը, անոնք ամպերը կը ստեղծեն, զոգցես յափրացած իրեն երանաւէտ հորիզոնին յստակութենէն:

Արամ անոնցմէ էր. երբ տարակոյսին մէջ մէյ մը մոլորուէր, ալ էն պատիկ դէպքերուն մէջ իսկ՝ որ իր մտքին առջեւ կը պարզուէին՝ կը նկրտէր տեսելու, գրեթէ բռնի, իր ստորնացումը և Աննային ոսկի ժպիտներուն տակ պահուըտող խաբէութիւն մը:

Իր լացէն վերջը, մրափ մը կը ծանրանար իր վրան. անհանգիստ կը զարթնուր. հառաչանք մը զուրա կը սողոսկէր իր լանջքէն:

Օ՛հ, որքա՛ն սոսկալեր էր սիրոյ տանջանքներէն. և հիմայ ինքը դժբախտ էր:

Որովհետեւ վստահ էր չսիրուելուն. որովհետեւ իր մէջ ամէն բան կ'ըսէր իրեն թէ Աննա չսիրէր զինքը:

Մէկ երկու անգամ փորձուեցաւ անոր տունը երթալու. բայց ո՞չ միթէ միւսնոյն բացատրութիւնը պիտի լսէր միշտ՝ միւսնոյն կեղծ գորովի բառերովը շողբորթուած. ուստի միտքը դրաւ կռուիլ ինքզինքին դէմ:

ու ոտքը չկոխել Աննային տունը, փախչիլ գիւղէն, պատրուակներ ստեղծել անոր եղբօրը, վերջապէս ալ չխաբուիլ:

Իրաւ, այս որոշումը գործադրելը նախ շատ տաժանելի եկաւ իրեն համար, բայց կամաց կամաց վարժուեցաւ. արդէն այնպէս կը կարծէր որ իր մէջ բնագոյնումը միշտ արթուն, կ'ըսէր իրեն թէ աւելի մեծ դժբախտութիւն մը կը սպասէ հոն:

—Ի՞նչ գիտնամ որ, կը գոչէր վերջապէս, ինքնիրմէն ելած, զուարճացողին մէկը չէ ան:

* * *

Անդին, Աննա, պարապ տեղը շաբաթներէ ի վեր իր պաշտելոյն գալուն կը սպասէր:

Իր եղբօրը անոր վրայ բան մը հարցընելու քաջութիւնը չունէր. ճշմարիտ սիրողը չկրնար մէկու մը քով արտասանել իր սիրածին անունը:

Ու, յուսակտուր, դառն մտածումներու դժոխքին մէջ, Աննա կը տանջուէր մեղապարտի մը պէս:

Իր դէմքը օրէ օր կը նիհարնար, իր աչքին եզրը հիւծումը իր մութ դրօշմը կը քսէր:

Թէեւ միշտ կը յուսար որ Արամ պիտի գայ, ու անձկաւ կը սպասէր անոր, բայց իր սրտին մէջ անբուժելի վէրքի մը արմատացումը կը զգար:

Իր փափուկ էութեան մէջ հիւանդ երեւակայութիւն մը սպառումի թոյնը կը սրսկէր. ցնորք մը կը սլատէր զինքը, որպէս թէ ահաւոր անդունդի մը եզրքը գտնուէր, ու իր նայուածքները տարտամութեան մը մէջ կը մոլորէին:

—Նորէն առջինն է, կ'ըսէին իրենները, և այս բանը անոնց շատ ցաւ կը պատճառէր. մինչեւ որ աւելի լուրջ կերպով սկսան զբաղիլ իրմով:

Լեցուն է, թիւրմացութիւններով լիցուն է սիրոյ աշխարհը. շատ մը սէրեր անոնցմէ մէկովը հալած են ու հալեցուցած են կեանքերը:

Բառ մը որ սխալ կը մեկնուի, կամ զաղափար մը որ չհասկցուիր, տարակոյսի մշուշովը կը ծածկէ ամենէն երջանիկ սիր-

լոյ պայծառ տրեւը . որովհետեւ այն վայրկեանին որ սէրը այլ եւս հրդեհում մըն է որ կը լափէ հոգին , ա՛լ միտքը կ'ընկճի և գառադաթիւնը կը ծախ :

Երկուքն ալ իրար կը սիրէին . երկուքն ալ իրենց բնայիտ ու ձգտումներովը իրարու մօտ՝ պիտի երջանիկ ըլլային :

Եւ ահա Արամը կուլայ , զժրախտ կը կարծէ իր անձը որովհետեւ զոհողութիւն չունի Աննա , որովհետեւ կը հաշուէ անիկա , հետեւաբար չսիրեր զինքը :

Աննա կուլայ , կը մտածէ այս փոսին վրայ որուն մէջ ժամագրութիւն կ'ընեն տառապեալները , որովհետեւ իր գուզէնին հետ կը չփոթէ Արամը , որովհետեւ այրերուն հետ կը չփոթէ իր գուզէնը և Արամը :

* * *

Հիմա երկու տմիտ անցած է :

Ամառ տան տաք գիշեր մըն է . Աննա , որ դեռ աչքը չէ գոցեր , կ'արատառուէ իր ննջատենեակին պատուհանին առջիւր :

Այ որ գիտէ իր ցաւը , ոչ իսկ Արամը :

Իր սէրը , իր բուռն տ ճամբորտ սէրը զազանիք մը պիտի մնայ ամենուն , նոյն իսկ Արամին :

Ու , համակերպած Լքման գժնէութեանը , ծծեալով ինքն իր մէջը օրէ օր մեծցող ցաւի մը թոյնը , Աննա , հրեշտակի պէս աղբորցած , այդ գիշերն ալ առանց բոսի կ'անցընէ :

Սոսկալի կերպով կը տառապի , ամէն մէկ րոպէին , զոր ժամանակը կը խլէ իր կեանքէն , կ'իմանայ որ չունչ մըն ալ , յոյսի կոտոր մըն ալ կ'երթայ իրմէն :

Բոլորովին թայ թաշկինակ մը ունի իր նիհար գողգոջուն ձեռքերուն մէջը . ալ իր արցունքները անով չարբեր , որպէս զի անոնք զովացնեն իր գունաթափ տյաերուն տենդը . և իր հեծկլտութիւնը զապելու համար , թաշկինակը իր բերնին վրայ կը բռնէ պիրկի մը , արցունքներուն աղի խոնաւութիւնը ծծեալով :

Դժնգակ է իր մըլած պայքարը . սիրելու գառնութիւնը իր հոգին ժանդատել է . սիրուելու անընթանին մէջ գինովցած պահուն , երջանկութեան զիմակովը արտաբայը վիշտը իր էութեան մէջ մտեր է :

Կամաց կամաց , գիշերը իր վրայէն կը նետէ մութ շղարչները որոնք կը ծածանին վար թափթփելով . հեռուն , հարկոնին վրայ , սեւ ստուերները՝ որ խտացեր էին ամպերու պէս՝ կը փառսուին ու ազօտ լոյսի բեկորներ կ'ըլլան :

Արշալոյսի միօրինակ սուքը , որ չքնաշու տարաբախաներուն համար հեգիկ հեգիկ կը փչէ , Աննայի մազերուն հետ կը խաղայ :

Հագիւ քանի մը վայրկեան , բազմոցին վրան , քունը տարեր էր , ամբողջ գիշերը լալէն ու հեծկլտալէն վերջը , երբ՝ երազին մէջ Արամին աւտերուն համարյոք մը գրած միջոցին՝ ցնցումով մը արթնցաւ :

Հոգին փայփայտնքէն զոհ մնաց մէկէն ի մէկ :

Իր վտիտ մատերովը ճակտին քրտինքը սրբեց , ու , հրճուանք մը , զովութիւն մը զգաց իր մէջը , արշալոյսին առաջին շողերուն նայելով ակնդէտ :

Արդեօք պիտի ապրի՞ իսեղճ ապշիկը :

Գուցէ ոչ :

Բայց եթէ ապրի իսկ , պիտի կրնա՞յ սիրել :

Տժգոյն երես ու կապոյտ աչուի հուրինները երկու անգամէն աւելի չեն կրնար սիրել . անոնց երրորդ սէրը փոսի մը եղեբք կը սկսի , ու անոր մէջը կ'անմահանայ :

ՎԱՀԱՆ ՄԱԼԷՋԵԱՆ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Ա. Դ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Ս. Պատրիարք հայրը կարգադրել էր ըսած է Կեսարիոյ Տէրէվէնքի վանքին վանահայր Դանիէլ վարդապետը , որ կը զրուհուի Էնկիւրիի զատապարտեալներուն մէջ :

—Ս. Էջ իսմնայ Սինօգի անդամ Արիտաակէս եպիսկոպոս Սեգրակեան , Տ. Սարգիս եպիսկոպոս Գառապրեան և իրենց ընկերացիք տրեգանները , ինչպէս նաեւ Ս. Երուսաղէմի Կ. Պոլսոյ պատրիարքական փոխանորդ Տ. Սիմէոն արքեպիսկոպոս

Սէֆէրեան յուլիս 18ին Աղեքսանդրիա ժամանելով՝ հինգ օր Եգիպտոս մնալէ յետոյ, յուլիս 23ին Եաֆա ժամանեւ են : Տեղւոյն վանքին մէջ երկու ժամի չափ հանգըտանալէ յետոյ, երկաթուղիով Երուսաղէմ հասեր են երեկոյին : Ս. Յակոբեանց Միաբանութենէն եպիսկոպոս մը և վարդապետներ կայարանը կը գտնուէին գիրենք դիմաւորելու : Կէս ժամ յետոյ, Գեր. ուղեւորը Ս. Յակոբայ վանքն առաջնորդուելով Սէֆէրեան, Սեզրակեան և Գասպարեան սրբազանները զգեստաւորուել և շարականներու երգեցողութեամբ ու վարդապետներու առաջնորդութեամբ Ս. Յակոբայ տաճարը մտեր են, յերկրպագութիւն Ս. Դիսազրի :

Յետ այս ուխտի կատարման, վանք դառնալով ներկայացեր են Ս. Երուսաղէմայ Պատրիարք Ամեն. Տ. Յարութիւն Սրբազանին որուն սեղանակից եղեր են ուրիշ հրաւիրեալներու հետ մէկտեղ :

Յաջորդ առաւօտուն, 24 յուլիս, Պատրիարքարանի մեծ դահլիճին մէջ կատարուել են պաշտօնական ներկայացումներն և ընդունելութիւնները :

Տ. Արիստակէս եպիսկոպոս և Տ. Սարգիս եպիսկոպոս օգոստոս 5ի հինգշաբթի օրը Երուսաղէմէն ճամբայ ելեր են Էջմիածին ուղեւորելու համար : Գեր. Սինօղականները ուղղակի Աղեքսանդրիա պիտի երթան, ուսկից պիտի շարունակեն իրենց ուղեւորութիւնը աւստրիական չոգենաւով : Եաֆայի լիզուագէտ ազգայիններէն Պ. Սրտպիտն Մուրատեան՝ Սրբազան ուղեւորներուն կ'ուղեկցի իրր թարգման :

Երուսաղէմայ Ս. Պատրիարքը մօտ օրէն ճանրայ կ'ելլէ մայրաքաղաքս գալու համար :

—Թիֆլիզի Ներսէսեան դպրոցի տեսչի պաշտօնակատար Պ. Կ. Կոստանեանը յուլիս 27ին Վիեննա ուղեւորեւ է :

—Քաղաքական ժողովն յատուկ պաշտօնադրով մը արտօնած է Ուսումնական խորհուրդը՝ ներկայ դպրոցական տարեկան արձակուրդի ատեն մայրաքաղաքիս վարժարաններու ուսուցիչները և ուսուցչուհիները ժողով գումարելու, օգոստոս 9, 16, 23 և 31 երկուշաբթի օրերը, Ղա-

լաթիոյ խորհրդարանին մէջ :

—Ս. Էջմիածնի Գէորգեան ճեմարանի անցեալ տարուան շրջանաւարտներէն մէկը՝ Բազրատ Վարդապետեան՝ միաբան ընդունուել է :

—Պաղտատի առաջնորդական փոխանորդ Արիստակէս եպիսկոպոս Դերձակեան, որ ինն ամիս առաջ Կ. Պոլսէն մեկնելով Տիգրանակերտ և անկէ Մուսուլ այցելած էր զանազան գործերու կարգադրութեան համար, յուլիս 27ին Պաղտատ ժամանելով իր պաշտօնի գլուխն անցեր է :

—Երաժշտապետ Զուհաճեան Էֆ. իր Զեֆէթ թատերախաղը բարեփոխած է և խաղերէնի թարգմանել տուած է : Այս նոր վիճակին մէջ, Զեֆէթն օգոստոսի վերջերը պիտի ներկայացուի ի Բերա :

Ն Ե Ր Ք Ի Ն

Ղալաթիոյ մաքսատան մէջ դործուած գեղձումներուն համար ամբաստանեալ պաշտօնեաներու հարցաքննութիւնները սկսած են կատարուիլ : Հարցաքննիչ դատաւորն արձանագրած է՝ մաքսային վերատեսչութեան կողմէ իբրեւ անձնական դատախազ զրկուած պաշտօնէին յայտարարութիւնները :

—Ելմտական նախարարութեան պաշտօնատարներէն Նահմիաս պէյ, որ այցելած ըլլալով 1889ի բարիդեան ցուցահանդէսը՝ մասնաւորապէս ուսումնասիրած էր անոր կազմակերպութիւնը, ճրագիր մը մատուցեր է ձեռնհաս իշխանութեան՝ Կ. Պոլսոյ ցուցահանդէսին ծախուց հայթայթման համար : Նահմիաս պէյ կ'առաջարկէ վիճակաւոր պարտատոմսեր շրջարեւութեան հանել, կարճ պայմանաժամի մէջ վճարելի :

—Անատօլուի երկաթուղեաց ընկերութեան բաժնէտեսարց ընդհ. ժողովն գումարուել է յուլիս 30ին ի Ֆրանքֆորթ և վաւերացուցեր է հաշիւները որոնցմէ կ'երեւի թէ ընկերութիւնը 1,277,713 ֆր. 35 սանդիւմ գումար չահ ունի վերջին տարեշրջանին մէջ :

—Բժշկական վարժարանի այս տար-

ուան չընթանաւ արտոնելուն չորս տարեկաներ կայս. Իրատէի մը համաձայն, Փարիզ, Լոնտոն, Պեդին և Վիեննա պիտի զրկուին յատկապէս քիմիագիտութիւն ուսանելու համբ:

—Անցեալ չորեքշաբթի զիշեր Կէրիճի գատախն մէջ երկրաշարժի ցնցում մը զգացուելով զիւրի մը մէջ տուն մը վերէն, սակայն մարդու կորուստ չէ պատահեր: Վերջերս Կարնոյ մէջ ալ երկու անգամ երկրաշարժի ցնցումներ զգացուեր են, սակայն արկած չէ պատահեր:

—Արեւելեան երկաթուղիներու ընկերութիւնը արտօնութիւն խնդրէ է Հանրագուտ շինութեանց նախարարութիւնէն երկրորդ զիմ մը շինել Սիբիւրի կեղծոնական կայարանէն մինչեւ Եէտի-Գուլէ, որուն բացարձակ պէտք կայ:

—Առողջապահական ժողովն ուրբաթ օրը ի նիստ գումարուելով որոշեց որ ծխաբը Մուսթաֆա Փաշա ժամանող ուղեւորները բժիշկներու կողմէ քննուին և անոնց պայքերն ալ տպանելով անոնք պիտի արկուին:

—Իզմիրի ծովափորէն (Գարա-Պուրուն հրաւանդանէն մինչեւ Թոլլիլիլի) եկող նաւերուն համար ասկից առաջ հաստատուած տառնօրեայ քարանձինն՝ օգտատու Զէն սկսեալ պարտաւորիչ է նաեւ Այալնի նահանգին ամբողջ ծովագերբին համար, Մաքրիէն մինչեւ Այալըզ: Բլազմէնի մարբանոցն, ըստ առաջնոցն, ենթարկուած չէ այս արամադրութեան, և անկից եկող նաւերը մաքուր անցապիտ կը տառնան:

—Իզմիրի առողջապահական արշաւութեան հրատարակած վիճակացոյցին կը յայտնուի որ յուլիս 19էն մինչեւ 27 քաղաքին մէջ պատահած են 84 մահ: 17 հազար միայն կասկածելի հիւանդութիւններէ: Յուլիս 31ին 8 նոր զէպք, որոց երեքը մահացու եղած են: Կիրակի 40 զէպք և 3 մահ: Երկուշաբթի իրիկուրէն մինչեւ երեքշաբթի իրիկուն քաղաքին մէջ 7 զէպք պատահեր է որոց 5ը մահացու: Նախորդ բանուածներէն ալ մեռեր են 2 հոգի:

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Փարիզի կոմսն, որ երեսփոխանական ամեն ընտրութեանց առթիւ իր կուսակիցներուն ուղղեալ շրջաբերականներով կը պատուիրէր հաւատարիմ մնալ իրենց կուսակցութեան և իրեն, այս անգամ լուռ կը կենայ, և Պապն ինք նորէն կոնգակ մը զրկելով, կը պատուիրէ կաթոլիկներուն անկեղծօրէն յարգել Հանրապետական զըուխիւնն, յարիւ անոր, և ահանջ չկախել այն կաթոլիկներուն որք կ'ըսեն թէ այս մասին Վատիկանի խորհուրդներուն չանսալու ազատ են:

—Նաչվիլի զրեթէ բոլոր զրամատանց սնանկանալը (երեք հազար միայն կանգուն կը մնան) կը վերագրուի ոսկւոյ նուազութեան յառաջ բերած տագնապին: Այս պատճառաւ ահա ոսկի կը քաշուի Անգլիայէն, և Անգլիոյ Պանքան կը հարկադրի նորէն հետզհետէ բարձրացնել իր զեղչի սակը:

—Անուանի Տոբի. Շառքօ, մասնագէտ ջլախն հիւանդութիւններու, մեռաւ ի Փարիզ, հիւնդշաբթի օրը:

—Վենետիկէն կը հաղորդեն թէ բնակիչները ցուրտէն կը դողդղան: Ուտինօէն կը զրեն որ անցած չորեքշաբթի առատ ձիւն տեղալով ծածկեր է Տիեօքիաի եւ Տիեօքիաի և Օլսպուճճարօի լեռները:

—Անգլ. լրագիրը կ'իմանան Աթէնքէ թէ ի Գիւլիո ֆրանսապետը կատարած պեղումներն, որք արդէն կարեւոր հնութիւններ երեւան հանած են, զաղբրուցած են զի հելէն պատուիրակները դանդաղած են թէ ֆրանսացիք պայմանագրութեան հետեակ կը վրուին՝ կատարեալ լուծիւն պահելով իրենց աշխատութեանց արգիւնքին վրայ:

—Հնախառը կը ծաւալուի Եւրոպոյ այլ եւ այլ կողմերը. Պերլին, Նաբօլի, Լէմպերկ, Պրալա, Սուլինա, Չերնովոմա, Սպանիա, Ռուսիոյ զանազան տեղերը:

ԱՐՏՈՆԱՏԻՐ

Մ. Ա. Ի. Թ. Ի. ՆԱՆՆ

Ի Տպարանի ԱՐԵՆԵԼԻՔ ԵՎ ՄԱՍԻՍ լրագրաց